ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/11674-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-901-17.03.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մարտի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 306 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-901-17.03.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ սույն արարքի քրեականացման անհրաժեշտությունը բխում է անձանց կողմից տեղեկություններ ստանալու սահմանադրական իրավունքի երաշխավորման պահանջից: Միաժամանակ, հոդվածը լրացվում է բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Հարկ է նշել, որ թեև առանձին դեպքերում լրացվող հանցակազմը կարող է առնչվել բնակչության առողջությանը վերաբերող հարցերի, այնուամենայնիվ, հանցանքի տեսակային օբյեկտ կարող են հանդիսանալ անձանց սահմանադրական իրավունքները կամ պետական ծառայությունը, սակայն ոչ բնակչության առողջությունը: Ըստ այդմ, օրենսգրքի կառուցվածքային ներքին տրամաբանությունը պահպանելու տեսանկյունից հոդվածը չի կարող լրացվել բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլխում:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից լրացվող հոդվածում օգտագործող ձևակերպումները խիստ վիճահարույց են, քանի որ հանցագործության հատկանիշ համարվող տեղեկությունների շրջանակն ակնհայտ անորոշ է և գնահատողական:

Այսպես, ո՛չ օրենսգիրքը և ո՛չ էլ նախագիծը չեն սահմանում «հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր» հասկացությունը: Միաժամանակ, քննարկվող ձևակերպումը կարող է ընդգրկել հարցերի խիստ լայն շրջանակ: Արարքի որակման հետ կապված գործնականում դժվարություններ կառաջանան՝ նաև հաշվի առնելով, որ հասկանալի չեն այն չափանիշները, որոնց հիման վրա պետք է գնահատվի՝ արդյոք կոնկրետ հարցը ներկայացնում է հանրային հետաքրքրություն, թե ոչ:

Նույնը վերաբերում է նաև «ազգային անվտանգությանն առնչվող հարցեր» ձևակերպմանը: Հասկացությունը սահմանվում է «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ որպես պետության և հասարակության այնպիսի կացություն, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ քրեական օրենսդրության մեջ օգտագործվող

հասկացությունները պետք է ավելի բարձր համապատասխանություն ունենան իրավական որոշակիության սկզբունքին, որպեսզի ապահովվի քրեաիրավական նորմերի որոշակի և կանխատեսելի լինելու պահանջները: Տվյալ դեպքում խնդրո առարկա հասկացությունը խիստ լայն և ընդգրկուն է, ինչը գործնականում կարող է անհամաչափորեն ընդլայնել հոդվածի կիրառման շրջանակը: Հասկանալի չէ հատկապես՝ հարցերի ինչպիսի շրջանակ են ընդգրկում տնտեսության բնականոն զարգացումը կամ հասարակության նյութական և հոգևոր արժեքները: Ըստ այդմ, բավարար չափով հիմնավորված չէ նաև այս երևույթներին առնչվող հարցերով կեղծ տեղեկություններ տրամադրելու այնպիսի հանրային վտանգավորությունը, որը կարդարացներ արարքի քրեականացումը:

Հատկանշական է նաև, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրված՝ Եվրոպայի խորհրդի 12 երկրներից (Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Վրաստան, Իսլանդիա, Ռուսաստան, Լիխտենշտեյն, Լիտվա, Մոլդովա, Նորվեգիա) և ոչ մեկի քրեական օրենսգրքում նախատեսված չէ համանման հանցակազմ:

Բացի դրանից, անհրաժեշտ է արձանագրել, որ պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունների շրջանակներում կամ դրանցից դուրս հանրորեն վտանգավոր արարքներ կատարելով օրենքով պաշտպանվող համապատասխան օբյեկտների դեմ ոտնձգելու դրսևորումներն արդեն իսկ նախատեսված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք օրենսգիրքը թողնել անփափոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արմեն Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-901-17.03.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-901-17.03.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդվածը 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի Քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետեյալ բովանդակությամբ 278.1 հոդվածով.

«Հոդված 278.1 Պաշտոնատար անձի կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող կամ ազգային անվտանգությանն առնչվող հարցերով կեղծ կամ իրականությանը չհապատասխանող տեղեկություններ հրապարակայնորեն հայտնելը.

1. Պաշտոնատար անձի կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող կամ ազգային անվտանգությանն առնչվող հարցերով կեղծ կամ իրականությանը չհապատասխանող տեղեկություններ հրապարակայնորեն հայտնելը

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկից մինչեւ հազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ մինչեւ մեկ տարի ժամկետով?»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու եւ փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաեւ տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:»

Պետության ճիշտ կառավարման բաղադրիչը ոչ միայն ժողովրդին կառավարմանը մասնակից դարձնելն է, այլ նաեւ կառավարող ժողովրդի՝ ճիշտ տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովումը: Ժողովրդավար պետության հիմքը ոչ միայն խաղաղ պայմաններում տեղեկատվության ազատության ընձեռումն է յուրաքանչյուրին, այլ նաեւ պատերազմական իրավիճակում այդ իրավունքի ավելի պատասխանատու իրացումը:

ՀՀ քրեական օրենսգիրքը արգելում է տեղեկությունների թաքցման կամ կեղծման հետ կապված այնպիսի իրավահարաբերություններ, ինչպիսիք են Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը, Շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը եւ այլն. ընդ որում՝ առանձնահատուկ է նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի կարգավորումը, որով քրեականացնում է Պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաեւ կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը: Պարզ ասած սա թերեւ արգելում է բացառապես գրավոր ձեւաչափով

կեղծ տեղեկություններ տրամադրելը, մինչդեռ բանավոր՝ հայտարարությունների, ելույթների ու լրագրողական հարցերին հրապարակային պատասխանների դեպքում, որոնք արտահայտված չեն գրավոր ձեւով, պաշտոնատար անձանց կողմից հաճախ է լինում տեղեկատվության կեղծում կամ սուտ տեղեկության հայտնում, ինչը ունի հանրային բարձր վտանգավորություն:

Նախագծի կարեւորությունը կայանում է նրանում, որ արգելում է պաշտոնատար անձանց կեղծ տեղեկատվություն տրամադրելը, ինչը առաջին հերթին պետական իշխանության վստահելիության կարեւորագույն երաշխիքն է: